

աւագ դրան առջեւ, որպէս զի մտնողներն ու ելնողներ տեսնեն: Վարդապետն երբ սթափեցաւ, ամօթահար՝ սկսաւ լալ եւ առնիծել: Անկարգութեան բաժակը լցուած էր: Շատ չանցաւ, յանկարծակի ահաւոր երկրաշարժն անոնց լըբենի քրքիջները ճշի եւ խուճապի կը փոխէր, կործանելով անոնց գլխին՝ չորեքդարեան ոստանին հըզօր պարիսպներն ու ճոխ դաստակերտները (Հյպտ. 514-5): Բնութիւնը կ'աւարտէր զեղիսութեան սկսած ու խժուոժ ձեռքին յառաջ վարած աւերը: Եւ Անին, գեղեցիկն ու շուայտ, կը ջնջուէր քաղաքացցանկէն, իւր ետեւ թողլով այլասերած ու վայրավատին ժողովուրդ մը, եւ դիր եւ տար փլատակաց մահասարսուռ հովիտ մը, ուր Ախուրեանը կը հեծէ վարանոտ, ուր ջղջիկը կը սաւառնի սգաթեւ, ուր կ'ողբայ պատմութիւնը:

5. — Անկեղծ եւ պատմիչները: — Թեւրեւս պիտի գտնուին անձինք՝ որ հարցընեն՝ թէ աշխարհականաց կամ Անուոյ դէմ մեր թուած ծանր ամբաստանութեանց մէջ արդեօք չկայ չափազանցութիւն կամ կուսակցական հակառակութեան պէս բան մը մեր եկեղեցական պատմչաց կողմանէ: Ես համոզուած եմ՝ թէ չկայ: Եւ ապացոյց՝ նախ անոնց համաձայնութիւնն ամէն դա-